

ՔԼԵՄԵՆՏԻՆԻ ՄԵՋ

«ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ, ԱՅԼ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԱՓՈՒՐ ԱՓՈՒ, ԻՍԿ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՓՈՒՆԱՆՅՈՒՄԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ»

ՇԵՇՏԵՑ ՄԻՔԱՅԻ



Վարչապետ Նեժմյա Միքայելի երկ Երեկոյան այցելեց Զլեմանսո, ուր հանդիպում մը ունեցաւ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ռալփ Ժոնսոնի հետ:

Հանդիպումն ետք վարչապետ Միքայել յայտնեց, որ ժոնսոնի հետ քննարկած է շարք մը հարցեր, յատկապէս՝ ապրուստի վերաբերող:

Պատասխանելով նախագահական անիշխանութեան եւ ընթացիկ կառավարութեան դերակատարութեան մասին հարցումի մը՝ Միքայել յայտնեց, որ այդ հարցը ուղղակիօրէն չեն քննարկած: «Անիշխանութիւն կոչուած բան չկայ, այլ՝ նախագահական թափուր աթոռ, իսկ նախագահին լիազօրութիւնները կը փոխանցուին կառավարութեան», շեշտեց Միքայել՝ աւելցնելով, որ սահմանադրութիւնը յստակօրէն ճշդած է, թէ նախագահական թափուր աթոռի պարագային հանրապետութեան նախագահին լիազօրութիւնները կը փոխանցուին կառավարութեան:

Միքայել յայտնեց, որ այսօր ան հանդիպում մը պիտի ունենայ խորհրդարանի նախագահ Նեպիի Պլերրիի հետ:

ԼԻՔԱՆՆԻ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՖՈՆԻՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ, ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԶԱՅՆ «ՉԱՍՈՂ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ» ՇԱՐՔԻՆ ԴԱՍԵԼ

«Շարք Աուսաթ» օրաթերթին համաձայն, Լիբանանի մէջ ելեմտական, ապրուստի եւ տնտեսական տագնապներուն լուծման կարելիութիւններուն մասին յոյսերը նուազած են՝ Միջազգային դրամական ֆոնտի պահանջներուն եւ բարեկարգումներուն գործադրութեան իմաստով արձանագրուած պաշտօնական անկարողութեան լոյսին տակ:



Նոյն օրաթերթը կը գրէ, թէ քաղաքական տարակարծութիւնները սուր են, յատկապէս կառավարութեան կազմութեան եւ հանրապետութեան նախագահի ընտրութեան առումով: Թերթը նաեւ կ'ընդգծէ, թէ Լիբանան հասած է ամբողջական անդամալուծութեան մակարդակի՝ կառավարութեան հիմնական ծառայութիւններու մատուցումին իմաստով:

Միջազգային դրամական ֆոնտի պատասխանատուները հաստատեցին, որ դրամատնային գաղտնիութեան օրէնքը տակաւին թերութիւններ կը բովանդակէ, եւ կոչ ուղղեցին պատասխանատուներուն իրենց նախաքայլերը անելու ելեմտական մարզը բարելաւելու՝ աւելցնելով, որ ասիկա իրենց ներկայացուցած հիմնական հինգ պահանջներն է Լիբանանի տնտեսական կացութիւնը բարելաւելու համար:

Միջազգային դրամական ֆոնտը հաստատեց, որ այնքան ատեն որ այդ օրէնքներուն գործադրութեան յստակ ժամանակ չէ ճշդուած՝ իբրեւ տնտեսական ապաքինման նախապայման, ապա կացութիւնը կ'ուղղուի դէպի յաւելեալ վատթարացում: «Լիբանան մուտք գործած է նախագահական ընտրութեան գործընթաց, իսկ ընթացիկ հարցերու կառավարութիւնը անկարող է հանդիպում մը կայացնելու եւ ապաքինման օրէնքը փոխանցելու, հետեւաբար ելեմտական բոլոր գործընթացները անկարողութեան են, եւ անոնց ճակատագիրը անորոշ է», ըսաւ ան:

Նոյն արդիւրները հաւանական նկատեցին, որ Լիբանան չկարենայ գործադրել իրմէ պահանջուած բարեկարգումները, ինչ որ կրնայ պատճառ դառնալ Միջազգային դրամական ֆոնտին հետ համաձայնութիւնը ջնջելու:

ՊԵՅՐՈՒԹԻ ՆԱԻԱԿԱՆԳԻՍՏԻ ՊԱՅԹՈՒՄԻՆ ԶՈՂԵՐՈՒՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՆԵՑԻՆ ԱՄՐԱՊԵՂԻԿԸ ԳԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պէյրուօի նաւահանգիստի պայթումին զոհերուն ընտանիքներուն միութիւնը հաստատեց, որ ճշմարտութիւնը տակաւին կորսուած է քաղաքական այնպիսի քուլիսներու ետին, որուն հեղինակները եւ ստեղծողները քաղաքական ուժերն են:



Իրենց խօսքը ուղղելով պատասխանատուներուն՝ զոհերուն հարազատները յայտնեցին, որ 15 ամիսներ անցած են եւ անոնք տակաւին պատասխանատուութիւնը իրարու կը վերագրեն եւ անկէ փախուստ կու տան՝ սահմանադրութեան եւ օրէնքներուն ետին թաքնուելով, կարծեք անոնք նպատակը ըլլայ հաշտութեան խուսափիլ:

Միութիւնը հաստատեց, որ իրենց համբերութիւնը հատած է պատասխանատուները իրարու կը վերագրեն եւ անկէ փախուստ կու տան՝ սահմանադրութեան եւ օրէնքներուն ետին թաքնուելով, կարծեք անոնք նպատակը ըլլայ հաշտութեան խուսափիլ:

Չոհերուն ընտանիքները պահանջեցին երեսփոխանական պլոքներէն ճնշում բանեցնել խորհրդարանին վրայ, որպէսզի ան փոփոխութեան ենթարկէ այն օրէնքները, որոնք կը վերաբերին դատական իշխանութիւններուն անկախութիւնը ամրապնդելու, որովհետեւ չկայ երկիր մը անոնց դատական իշխանութեան, եւ չկայ ապահովութիւն՝ առանց հաշտութեան:

ԼԻՔԱՆՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Քորոնա» ժախրով 351 վարակուածներ եւ մահացած է 1 պարագայ:

● ՍԵՒ շուկային մէջ ամբիկեան տուարին փոխարժեքը 35.100 լ. ոսկի է:

● ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ նախագահ ԳՕՐ. Միշել Աուն ընդունեց Պալապե-Յերմելի նահանգապետ, դատաւոր Պէշրի Խաւրը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադրածութիւնները, ինչպէս նաեւ Պալապե-Յերմելի բնակիչներուն դիմագրանւած ընկերային եւ ապրուստի տագնապները:

● ՈՒԺԱՆԻԹԻ Եւ ջուրի հարցերու նախարարութիւնը ջրապարակեց վառելանիւթի նոր սակցոյցը, որուն համաձայն՝ 95 օքթան պենզինի սակը սղած է 12.000 լ. ոսկիով, 98 օքթան պենզինի՝ 13.000 լ. ոսկիով, իսկ մագուրի է պիւթակազի սակըրը նուազած են 2000 լ. ոսկիով: Հետեւաբար, վառելանիւթի նոր սակցոյցին համաձայն, 95 օքթան պենզինի թիթեղին սակն է 628.000 լ. ոսկի, 98 օքթան պենզինը՝ 643.000 լ. ոսկի, մագուրը՝ 777.000 լ. ոսկի, իսկ պիւթակազը՝ 341.000 լ. ոսկի:

● ԳԱՐԹԱՎԱՆՆԵՐՈՒ հարցերու նախարարի պաշտօնակատար Իսամ Շարաֆետին յայտնեց, որ Արաւի մէջ կարելի եղած է հիմնել սուրիացի տեղահանուածներու աշխատանքները համադրող կեդրոն մը՝ աւելցնելով, որ յառաջիկայ շաբթուան ընթացքին տեղահանուածներուն վերաբերող երկու այլ կեդրոններ պիտի բացուին Աքքարի եւ Թրիփոլի մէջ: Շարաֆետին հաստատեց, որ Արաւի մէջ 60 հազար սուրիացի տեղահանուած կ'ապրի:

● ԲԱՐԵԿԱՐԳԶԱԿԱՆ երեսփոխան Նաժաթ Աուն-Սալիպա յայտնեց, որ ինք նախագահական ընտրութեան թեկնածու չէ՝ աւելցնելով, որ ինք կը յարգէ լիբանանցիներուն կամքը, որուն հիման վրայ ընտրուած է երեսփոխան: «Դերակատարութիւնս լրի պիտի փորձեմ կատարել», ըսաւ ան:

● ՀՅՕՐ հանրապետութիւն համալսումնաբար երեսփոխան Ֆատի Զարաֆ յայտնեց, որ իրենք կը պահանջեն հանրապետութեան նախագահ մը, որ կրնայ փրկութեան ծրագիր մը պարտադրել՝ սկսելով լիբանանեան գերիշխանութենէ:

● ԹԱՌԻՀԻՏ հոսանքի ղեկավար Ուհամ Ուհապա յայտնեց, որ բոլորը կը վախնան ու մտահոգ են պատերազմի հաւանականութենէ եւ հարցեր կու տան այդ իմաստով: «Իմ նախագագուստ այն է, թէ պատերազմ չկայ եւ ոչ մէկը կը փափաքի պատերազմը: Խաղը հաւասարակշռուած է», ըսաւ ան:

● ԼԻՔԱՆՆԵԱՆ բանակի հրամանատար ԳՕՐ. ժոզեֆ Աուն ուղղուեցաւ Իտալիա՝ ընդառաջելով Իտալիոյ զինուոր ուժերու իրամասնատար ծովակալ Ճիւզեպիէ Տրակոնի հրաւերին: Կը նախատեսուի, որ քննարկուին երկու բանակներուն միջեւ գործակցութիւնը եւ լիբանանեան բանակին զօրակցելու միջոցները:

● ԼԻՔԱՆՆԻ մէջ Սեւտական Արաբիոյ դեսպան Ռալփ Պուխարի յայտնեց, որ արաբական եւ միջազգային հովանաւորութեամբ վաւերացած Ազգային ուխտը երեսակայութիւն չէ եւ մութ պատճառաբանութիւններ չի բովանդակել, այլ՝ բանաձեւուած է շարադրուած է գրական ու յստակ արաբերէնով:

ՏԻՄԱՆԻ ՄԵՋ

«ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱՓՈՒԹԱՓՈՒՐ ՄԱԼԸ ՄԵՐԺԵԼԻ Է, ԵՒ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆԸ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ԲՈՒՈՐԻՆ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԱՐԿԱԾԱԽՆԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ»

ՇԵՇՏԵՑ ՈԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸ

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը Տիմանի մէջ նախագահեց կիրակի օրուան Ս. պատարագին, որուն ընթացքին ան իր արտասանած քարոզին մէջ հաստատեց, որ իրենց համար յստակ դարձած է, թէ Լիբանանի դէմ ծրագիր մը գոյութիւն ունի: «Դժբախտաբար այսօր հարցը կը կայանայ այն իրականութեան մէջ, որ ո՛վ կը ստանձնէ սահմանադրական դատարկութեան եւ կամ նախագահական աթոռի թափուր վիճակին պատասխանատուութիւնը: Հանրապետութեան նախագահը, որուն պաշտօնակատարութեան ժամանակաշրջանը կը հասնի իր աւարտին, թէ՛ հրաժարած կառավարութիւնը», ըսաւ ան:



Շար. ը՝ էջ 8

ԼԻՔԱՆՆԻՆԵՐԸ ԿԸ ՊԱՀԱՆՋՈՒՄԸ...

Շարունակուած Ա. էջէն

ԼԻՔԱՆՆԻ ԶԱՐԱԶՄԻՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ ՆԱԻ ՀԱՍՏԱՆՍԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԻՐ ՊԱՐՏԱՌՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆՍԵ ՍՏԱՆԱԼՈՒ ՄՅՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Միւս կողմէ, երկ տեղի ունեցաւ հանդիպում մը վարչապետ Նեժմյա Միքայելի եւ հաղորդակցութեան միջոցներու նախարարի պաշտօնակատար Ճոնի Զըրըմի միջեւ: Հանդիպումին լոյսին տակ Զըրըմ վաւերացուց չորս հրամանագիրները, որոնք ուղղակիօրէն կապուած էին «Օժեր»-ի պաշտօնեաներուն պահանջներուն:



Զըրըմ ելեմտուեց լիբանանցիներուն խնդրեց ան հաշիւ 200 միլիար լ. ոսկիի յատկացում մը ապահովել:

Ան շեշտեց, որ «Օժեր»-ի պաշտօնեաներուն պահանջները արդարացի են, եւ հաւանական նկատեց, որ այսպիսով կարելի ըլլայ «Օժեր»-ի պաշտօնեաներուն գործադրելու կասեցնել:

Սակայն «Օժեր»-ի պաշտօնեաները կայացուցին երկրորդ հանդիպում մը, որուն ընթացքին հաստատեցին, որ որոշում տրուած է գործադրել շարունակելու, մինչեւ որ վստահ ըլլան, թէ իրենց հիմնական 4 պահանջները պիտի կատարուին եւ առաւելագոյնը մինչեւ հիւնաքարի, 8 սեպտեմբեր, իրենց գումարները պիտի փոխանցուին:

«Օժեր»-ի պաշտօնեաները ընդգծեցին, որ իրենց պահանջները չկատարուելու պարագային, իրենք պիտի վերադառնան ընդհանուր գործադրելի, այսինքն՝ մագուրով պիտի չօժտեն հեռաձայնային հաղորդակցութեան կեդրոնները:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆԻՏԻՆ
• Անահիտ Ղազարեանի մահուան առիթով՝
- Եղիշ Տարագճեան 300.000 լ. ո.

ՀՀԴ ԼԻՔԱՆՆԻ ԿԵՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ
ԳՕՐԱԿՅԱԿԱՆ ՀԱՄԱՐ
«ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ» շարժումին
Խօսք կ'առնէ ԻՇԽԱՆ ՍԱՐԱՔԵԼԵԱՆ
ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր
• ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի Խօսք
• Տեսերիզի ցուցադրութիւն
Տեղի կ'ունենայ չորեքշաբթի, 14 սեպտեմբեր 2022-ին, երեկոյան ժամը 8:00-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ՀՐԱՏԱՊ ՕՐԱԿԱՐԳ
Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ ՍՈՒՐԱՏ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՀԵՏ
Իր նոր գիրքին՝ «Էրտողանի վարչակարգը սպառնալիք Ֆրանսայի համար» հատորին եւ Հայաստանի ու Արցախի վերջին զարգացումներուն մասին:
Երեքշաբթի, 6 Սեպտեմբեր 2022, Կեսօրուան ժամը 12.00-ին:
Radio Voice of Van
Radio Voice of Van:Live
Voice of Van Vanatsayn
Radiovoiceofvan

ՊՐԻՒՔՍԵԼԵԱՆ ԶԵՒԱԶԱՓՆ ՈՒ ՌՈՒՍԻԱՆ

31 օգոստոսին Պրիքսելի մեջ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ազրայեյանի և Ազրայեյանի նախագահ Իլհամ Ալիևի 4-րդ հանդիպումը՝ միջևորդությամբ Եվրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշելի:



Նույն օրը Մոսկուայի մեջ տեղի ունեցավ Հայաստանի և Ազրայեյանի միջև պետական սահմանի սահմանազատման ու սահմանազաման վերաբերյալ երկու երկիրներում փոխվարչապետներու գլխավորած պատուիրակություններու բանակցությունները՝ միջնորդությամբ Ռուսիոյ փոխվարչապետ Ալեքսանտր Օվերչուքի:

Այս իրողությունը, որ պրիքսելյան եռակողմ հանդիպումի ընթացքին Հայաստանի և Ազրայեյանի արտաքին գործոց նախարարներուն յստակ պարտականություն կը տրուի մեկ ամսուան ընթացքին աշխատելու երկու երկիրներուն միջև խաղաղության համաձայնագրի մը վրայ, մտածել կու տայ, որ անոնց պարտականություն տրուած է պատրաստել համաձայնագրի նախագիծ մը ու զայն Պրիքսելի մեջ նոյեմբերին նախատեսուած եռակողմ 5-րդ հանդիպումին աւարտին կնքուելու համար ներկայացնել իրենց երկիրներու ղեկավարներուն: Մինչ այդ, ինչպէս Եվրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշել եռակողմ հանդիպումէն ետք յայտարարեց՝ «Կարելի է երկու կողմերու բնաչուծութիւնը պատրաստել երկարամիտ կայուն խաղաղութան»:

Ստեղծուած է կացութիւն մը, ուր Միացեալ Նահանգներ կողմնակից են ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ձեւաչափին, Եւրոպական խորհուրդը անտեսելով այդ ձեւաչափը՝ առերեսոյթ ինքնագլուխ կը գործէ, Ռուսիան ու Ազրայեյանը բացայայտ կերպով դժմ են այդ ձեւաչափին, իսկ Հայաստանի իշխանութիւնները խոսքով կը զօրակցին այդ ձեւաչափին, սակայն գործակալին մէջ դժմ չեն հայ-ազրայեյանական տագնապին այլ ձեւաչափերու ճամբով լուծման:

Ալեյի՛ն. Միացեալ Նահանգներն ու Արեւմուտքը Ռուսիոյ կը ներկայացնեն երկընտրանք մը՝ կա՛մ ընդունիլ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համաձայնագրութեան ձեւաչափի վերականգնումը եւ այդ ձեւաչափի վերականգնմամբ Հարաւային Կովկասի մէջ իր ազդեցութեան որոշ չափով նուազումն ու համաձայնագրի ներքին Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի կողմէ հակակոշտումը, կա՛մ ալ պրիքսելյան ձեւաչափը իր ընթացքը կը շարունակէ՝ մեկուսացնելով կա՛մ անուսուած միջնորդի դափնիէն զրկելով ու քաղաքական գետնի վրայ խոցելով Ռուսիան:

Մոսկուան, սակայն, իր գինանցիկ մէջ ունի երրորդ ընտրանք մը՝ պրիքսելյան հոլովոյթի տապալումը: Այս ծիրին մէջ ուշագրաւ էր 2 սեպտեմբերին Լաւրով-Միդոյեան հեռաձայնային զրոյցի ընթացքին, ըստ ռուսական կողմի հրապարակած հաղորդագրութեան, 2020 թուականին նոյեմբեր 9-ի, 2021 թուականի յունուար 11-ի եւ նոյեմբեր 26-ի եռակողմ համաձայնություններու իրականացման եւ հեռանկարներու մասին խոսակցումը:

Ռուսիան ունի աշխարհաքաղաքական դիտանկյունէն «հակառուս» եղող պրիքսելյան ձեւաչափը տապալելու կարողութիւնը եւ բանակցություններու ընթացքին, օրինակ, կրնայ Արցախի անվտանգութեան երաշխիքներու ամրագրման վրայ ծանրանալ:

Յամենայն դէպս յստակ է, որ եկող երեք ամիսներուն պէտք է մօտէն հետեւիլ պրիքսելյան յառաջիկայ եռակողմ հանդիպումը նախորդող զարգացումներուն:


Մտնելով իր բախտին:

ՓՆԱՆՈՍ ԾԵՐԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԳԱՆՁԱՍԱՐ»-Ի

ՍՈՒՐԻՈՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄՊԱՌՆԱՅՈՂ ԿՈՂՄԵՐ

Հալեպի օդակայանին հրթիռակոծումը կրկին լուսարձակի տակ կ'առնէ Սուրիոյ տագնապին լուծումը ձայնողութեան մատնելու փորձերը: Վերջին շրջանին, երբ երկրէն ներս տարբեր կողմեր հաշտութեան բերելու գործընթացներու մասին շուկներ կը լսուին, Սուրիոյ դրացի երկիրներ, ինչպէս՝ Թուրքիա եւ արաբական կարգ մը երկիրներ, Սուրիոյ հետ մերձեցման եզրեր կ'որոնեն, միւս կողմէ՝ սուրիական բանակը կը յառաջանայ հիւսիսային շրջանին մէջ, խաղաղութեան հաստատման քաղաքական եւ զինուորական ջանքերը խափանելու հերթական փորձեր կը կատարուին յատկապէս Իսրայելի եւ Միացեալ Նահանգներու կողմէ՝ սահմանափակելու Սուրիոյ դաշնակիցներուն ազդեցութիւնը տագնապի լուծման հեռանկարներուն վրայ ու կրկին սպառնալիքներու լեզուով Սուրիոյ ապաքին:



ման ընթացքը խափանելու: Բնականաբար Իսրայել եւ Միացեալ Նահանգներ հաշտ աչքով պիտի չդիտեն Սուրիա-Ռուսիա, Սուրիա-Իրան յարաբերությունները, որոնք տնտեսական, ապահովական եւ այլ մարզերու մէջ, այս շրջանին, աշխուժ թափով կը յառաջանան:

Շար.ը՝ էջ 6

«ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԿԱՊԱՆՔՆԵՐ ԶԵՆ, ՇՂԹԱՆԵՐՆ ԷԼ ԿԸ ՓՇՐՈՒՅՆ»

2 սեպտեմբեր 2022. Արցախի Հանրապետության հռչակման 31-րդ տարեդարձին առիթով հանրահասարակական ընթացքի և Ստեփանակերտի մէջ: Երկու օր առաջ, Պրիքսելի մէջ, Եւրոպական Միութեան խորհուրդի նախագահ Շարլ Միշելի միջնորդությամբ տեղի ունեցած էր Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիևի հանդիպումը: Հանդիպման օրակարգային գլխավոր նիւթը եղած է խաղաղութեան համապարփակ համաձայնագրի կնքումը: Որոշուած է, որ մէկ ամսուան ընթացքին Հայաստանի եւ Ազրայեյանի արտաքին գործոց նախարարները պիտի սկսին պատրաստելու այդ համաձայնագիրը: Նկատելով, որ հանդիպումէն ետք կատարուած յայտարարությունները չեն յիշատակեր Արցախը, կարելի է մտածել, որ՝ տուրք տալով Ազրայեյանի պահանջին, Հայաստան դարձած է Արցախի ապագայ կարգավիճակի հարցը բանակցային նիւթ համարելու: Պարզ խօսքով, Հայաստան հրաժարած է Արցախէն՝ զայն թողելով իր բախտին:

3.- Բացառել Արցախի գինաթափումը: «Դիմադրութիւն» շարժման համար այս երեք պայմանները սկզբունքային բնոյթ ունին. անոնք պէտք է դառնան բանակցութեան նիւթ, այսինքն առաջ տարուին Հայաստանի գործող իշխանութիւններուն կողմէ: Իշխանութիւնները յայտնապէս հրաժարած են Արցախի ինքնորոշման իրաւունքի պահանջէն, նոյնիսկ Հայաստանի ինքնիշխան տարածքները պաշտպանելու իրենց պարտաւորութեան խաղաղութեան դարաշրջան բանալու խելակերպ քաղաքականութեան բերումով: Կը մնայ ուրեմն, որ ժողովուրդը յաջողի փոխել տալ պարտաւորական, ջնջելու համար դաւաճանական քաղաքականութիւնը: Զաղաքականութեան փոփոխութիւնը կ'ենթադրէ իշխող սակաւապետութեան վտարումը եւ փոխարինումը ազգային շահերը պաշտպանելու պարտաւորականութիւն ունեցող խոշոր իշխանութեամբ մը:

Նիկոլ Փաշինյանի իշխանութեան հեռացման համար կայ երկու ճանապարհ՝ ենթակային ինքնակամ հրաժարումը վարչապետի պաշտօնէն կամ պաշտօնազրկումը Ազգային ժողովին կողմէ: Առաջին ընտրանքը բացառուած է, քանի որ Փաշինյան կը հաւատայ, որ պատգամաւորական ընտրութեան արդիւնները իրեն կը պարգեւեն հնգամայ օրինաւորութիւն մը, զոր ինք կը թարգմանէ իբրեւ ուզածը ընելու բաց իրաւունք: Կը մնայ երկրորդ ընտրանքը:

ՏԻՊՈՒՆ ԾԵՐԱՆԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ԼԵՅԼԱԻԱՆ ԱՄՍՈՒՆԱՅԻՆ ԴՊՐՈՅԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ Լեյլաւանի վարչութեան եւ գործակցութեամբ «Գարակեօգեան» հաստատութեան, Երեքշաբթի, 30 օգոստոս 2022-ին Լեյլաւանի մարզադաշտին մէջ տեղի ունեցան Լեյլաւան ամառային դպրոցի փակման հանդիսութիւնը՝ ներկայութեամբ միութիւններու եւ կառույցներու ներկայացուցիչներուն, ծնողներու եւ շրջանի հայորդիներուն:



Լիբանանի եւ Հայաստանի քաղաքները լսելու ետք հանդիսութեան բարի գալուստի խօսքը արտասանեց ամառային դպրոցի պատասխանատու Սահիլ Թովմասեան, որ նշեց, թէ անցնող վեց շաբաթներու ընթացքին ծրագիրը ուրախ, ազգային, հաճելի եւ դաստիարակիչ միջավայրի մէջ ժպիտ պարգեւեց մեր փոքրիկներուն: Ան շնորհակալութիւն յայտնեց «Գարակեօգեան» հաստատութեան, որ նիւթապէս եւ բարոյյապէս ներկայացուցեց այս ծրագրի յաջողութեան: Թովմասեան նաեւ շնորհակալութիւն յայտնեց անձնակազմին եւ ծնողներուն:



Ապա դպրոցի տարիքային երեք խումբերը՝ Կարմիր, Կապոյտ եւ Լարնջային խումբերը, ներկայացուցին կոկիկ գեղարուեստական յայտագիր: Անոնք անցնող շաբաթներու դասապահներու ընթացքին սրված եղբերով, պարերով, ամուսններով եւ թատերական ներկայացումով ստեղծեցին տոնական եւ հայկական մթնոլորտ:

Այս առիթով, խօսք առաւ ԶՅԴ «Է. Ավետիս» կոմիտէի ներկայացուցիչ Բաքմի Տեմիրճեան, որ նշեց, թէ հակառակ երկրի բազմաուսուցական դժուարութիւններուն՝ փոքրիկները իրաւունք ունին ապրելու առողջ, ուրախ եւ դաստիարակիչ պայմաններու մէջ, եւ այս իմաստով ամառային դպրոցը եւս պէտք ծառայեց նշեալ նպատակներու իրականացման: Տեմիրճեան հաստատեց, որ «Գարակեօգեան» հաստատութիւն-կոմիտէ գործակցութիւնը վստահութեան վրայ հիմնուած է, եւ յառաջիկային սոր ծրագիրներով պիտի

Շար.ը՝ էջ 6

ԿԱՅՐԱՄ ԷՍՄԻԵԱՆ

X X X

Հայրդո՛ւկ
Երբ մեկնեցար
Կռուի դաշտ,
Խաչկապ կապած
փամփուշտներով շլացքէն
աստղ մը պայծառ երկինքին մէջ կը շողար:
Ղուկ զորածար,
աստղը մնաց՝ երկինքին:
Ամեն գիշեր,
Երբ կը տեսնեմ այդ աստղը՝
դուն կը մեկնիս վերստին,
բայց կը մնաս
մեր սրտերու խրամատին...

ՓՆԱՆՈՍ ԾԵՐԱՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԻԵՐԸ, ՉԻԱՒՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ, ՀԵԾԵԼԱԶՕՐԸ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ - ԺԸ.

Երկար ընդմիջումէ ետք կը շարունակենք այս յօդուածա- շարքը: Նախորդ՝ ԺԸ. մասը (1) աւարտեցինք հիքսոսներու մասին հաստատելով, որ՝ «Չարմանակի չեն այսպիսի «գիւ- տերը», մեկնաբանութիւնները, երբ տեր չենք կանգնիր մեր պատմութեան, եւ այսպիսի «յայտնութիւններ» առանց պա- տասխանի կը մնան, եւ մեր հայկական մամուլը առանց գա- նոնք ըստ եղբայրներու ընկալելու կամ խմբագրական ակնար- կի, իբրեւ «հետաքրքրական լուր», թուականի սման կը կրկնէ զանոնք, եւ մեր հասարակութիւնը կը մոլորեցնէ՝ դառնալով սխալ «Պատմութիւն»:



Նիկողայոս Ադոնց ժագ տը Մորկան Երուանդ Լալայեան

Այս յօդուածաշարքով կը բացայայտուին օտարին կողմէ հայոց պատմութեան բազմաթիւ խեղաթիւրումները՝ իրենց դոյզն մանրամասնութիւններով, ընդհանրապէս մէկէ աւելի այլ օտար եւ աւելի ինչ ու նոր աղբիւրներու փաստերով եւ շօշափելի պեղումներով, այլ կիւրծերու կողքին, նաեւ ձիերու ընտելացումը եւ մարտակառքերու ծագումը Հայկական Լեռ- նաշխարհէն սկսած է:

Անհատապէս է սակայն, որ այժմու Հայաստանի Հանրա- պետութեան կառավարութիւնը, թրջահաճոյ մոլուցքով մը, ինքն իսկ մեծաքանակ կերպով, պոլշեիկներուն նման, կը խեղաթիւրէ մեր պատմութիւնը՝ նոր դասագիրքերու եւ այլ միջոցներով՝ հակառակ պատմութեան կանոններուն, պատ- մաբաններուն, ուսանողութեան եւ ժողովրդային բողոքին, որոնց հեզանքով պատասխանեց թրջահաճոյ կրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեանը: Այս ոճիին բոլոր մեղ- սակիցները ուշ կամ կանուխ ծանրագոյն պատիժին պիտի արժանանան:

Այստեղ կ'արժէ նշել, որ Վրաստանի պարագային նաեւ, պատմական խեղաթիւրումով մը, վրացական Դաւիթ Գարե- ջի վանքը Ազրայեանին կողմէ անցած է:

14 յունիս 2022-ին «Նիուզ.ամ» (2) «Վրաստանում դատում են քարտեագիրներին, որոնց մեղքով Դաւիթ Գարեջիի վան- քը պիտի անցնէր Ազրայեանին» խորագիրով լրատուու- թեան մէջ կը գրէ. «Վրացի սահմանագծման յանձնախումբի նախկին անդամներ Իվերի Մելաշվիլի եւ Նաթալիա Իլիչեա կը մեղադրուին վրաց-ազրայեանական սահմանին սահմա- նագծման եւ սահմանագծման յանձնաժողովին մէջ աշ- խատելու ժամանակ 1937-1938 թուականներու քարտեք թաքցնելու մէջ, որուն պատճառով Վրաստանը կրնար զըր- կուիլ իր տարածքի 3500 հեկտարէն, որուն մէջ է Դաւիթ Գա- րեջիի վանական համալիրին մէկ մասը: Զննութեան տուեալ- ներով, անոնք յանցագործութիւնը կատարած են «գերադաս պաշտօնեաներու ցուցմունքով»: Որքան նման է Հայաստա- նի այժմու յանցագործ իշխանութեան...»



Հայկական ծանրագոյն այրուածի օրինակներ (վերականգնումը՝ Յ. Յակոբեանի եւ Կ. Աւագեանի (3)):

Գտնուածքները նման են բրոնզէ շերտի, որոնց եզրերը ծածկված են երկ- րաչափական գորտերով, իսկ միջին մասը քանդակապատ է: Ետքը երբեմն այնքան լայն է, որ նրա վրա որսի տեսարաններ են պատկերված: Հատուկ ուշադրութեամբ են արժանի գտնուելիք երկուսը: Մեկը ներկայացնում է կենդանու գլխով մի մարդու, որը կանգնած է երկու ձիով լծված կառքին, իսկ դիմացը պատկերված է այծյամների հոտը հետապնդող մի նետաձիգ: Մյուսի վրա պատկերված է թռչունի գլխով մի աղեղնավոր, որը կանգնած է երկու ձիերի ետևում, իսկ ձիերի վերևում թռչում է մի սրբաբզեզ, դիմացը՝ նետ եւ երկրորդ աղեղնավորը: Արդյո՞ք սա դիցաբանական մի տեսարան չէ: **Քարտեագիրները** բրոնզէ լարից կազմված է անաղով ամրացված աղեղի նման են: Վերջինը որոշ նմուշներում աղեղի հետ միասին կազմում է մի կտոր: Հետաքրքիր է նշել, որ գտնվել է մի մեծ ճարձանը, որը նման է Հա- յաստանում մինչև օրս էլ գործածվող այն ճարձանդներին, որոնցով անա- սուններին պիտոսն կապում են մարդին:

Ադոնց կը նկարագրէ դամբարանները պեղուած պրոնզէ գոտիներ, որոնք վրայ փորագրուած է երկու ձիով կառքեր, որոնք, ըստ Մորկանի, ԶԱ 3-րդ հազարամեակին կը պատկա- նին (4) էջ 34-40):

Խախտելով յօդուածաշարքին ժամանակագրական եւ տրամաբանական կարգը՝ այստեղ պիտի անդրադառնամ պատմաբան, փրկանդագետ եւ բանասեր Նիկողայոս Ադոն- ցի (Տեր Աւետիքեան, 1871-1942) շատ կարեւոր պատմական գիրքերուն, որուն «Պատմական ուսումնասիրութիւններ» հատորը (4) ուշադրութեան յանձնեց դոկտ. Երուանդ Յ. Զա- տուկին, այնտեղ նշում է նաեւ հայկական այրուածիին մասին Ադոնցի ուշագրաւ հաստատումները: Էջ 13-20 Ադոնց կը գրէ (ամփոփ հատուածներ, արեւմտահայերէն). «Այսօրուան գեղջուկ Հայաստանը, կար ժամանակ, որ տասնեակ մեծ ու փոքր իշխանական տոհմեր թառած էին հայոց լեռներու կուրծքին: Ամեն մէկը ուներ իր անառիկ ամ-»

րոցը եւ իր այրուածի, որ յայտնի թիւով հեծեալ մարտիկներ էին: Այրուածի բաղկացած էր գրեթէ բացառապէս իշխանա- կան ընտանիքներու զաւակներէն եւ մերձաւորներէն: Հայ ազգասիրի, որեւոր կամ մանկտի կոչելով, պատմագիրները կը հասկնային ազատ դասի որդիներ:

«Այրուածի միակ մշտական գիտնորական ուժն էր ընդդէմ արտաքին թշնամիներուն եւ հայ աշխատաւոր շինականներուն նեցուկը: Ընտրիւի մշտապէս սպառազինուած ազնուա- կանութեան՝ Հայաստանը երբեք դիպաւալ թշնամիին առ- ջել չէ փռուած, ինչպէս տեսանք անոնց անկումէն ետք: Հռոմ, պարսիկ, արաբ, Բիզանդիոն չեն կրնար պարծնելու, որ նա- խարակական Հայաստանը իրենցմէ պարտուած է:

«Դարերու ընթացքին հայ աւատապետները կրցան կըռ- փի եւ պահել իրենց դիրքը եւ ազատութիւնը: Թշնամիները ծանր փորձերէ ետք բաւարարուեցան տարեկան տուրք գանձելով եւ գիտնորական օգնութիւն ստանալով... Նախա- արները յօժար էին արքունի գանձէն սովորական տուրք վճարելու, բայց՝ երբեք այրուածի յանձնելու օտարին: Հրա- ժարիլ այրուածի» կը նշանակէր գինաթափ ըլլալ, որ անձ- նասպանութեան համազօր էր»:

Ուրեմն նոյնիսկ պարտութիւններու պարագային, դարեր շարունակ հայկական այրուածի պահպանուած է, երբեք անձնատուր չէ եղած, միշտ պատրաստ՝ պաշտպանելու հայ- նիքին ու ժողովուրդը:




Հուրիներուն աշխարհը, ԶԱ 2300-ի քարտեք մը՝ Ուիլհելմ- տիա, հայերէն տեղանունները իմ կողմէ տեղադրուած են:

Այս առիթով, պրպտելով Ադոնցի միւս «Զննական պատ- մութիւն հայոց» հատորները, Դ. հատորին՝ «Պատմութիւն հայոց, Հայաստանի պատմութիւն. Ակունքները ԶԱ 10-6 դա- րեր» առաջին գլուխին սկիզբը՝ «Նախապատմական դա- րաշրջան» խորագիրին տակ (5), կը նշէ, որ Հայաստանի նա- խապատմական անցեալը բաւարար չափով չէ լուսաբան- ւած եւ, թէ՛ «Հողն իր ընդերքում տակաւին շատ անակնկալ- ներ է թաքցնում»:

«Առաջին պեղումները ռուս հնագետներու կողմէ սկսան 1879-ին, Դիլիջանի մօտակայ (իրենց անուանումով՝) Ռեդ- կին-լագերի մէջ, ուր յայտնաբերեցին 75 (նախնադարեան)՝ դամբարաններ:

«Աւելի կանոնաւոր հետազոտութիւններու պատիւը կը պատկանի Ժ. տը Մորկանին (ֆրանսացի ճարտարագետ, երկրաբան եւ հնագետ, Jaques de Morgan, 1857-1924, որ հրատարակած է «The History of the Armenian People, from the Remotest Times to the Present Day», («Հայ ժողովուրդին պատմութիւնը հեռու անցեալէն մինչեւ այսօր»), որ Ալավեր- դիի եւ Ալիթալայի շրջակայքը աւելի քան 576 դամբարան պեղեց: Այս գերմանացի ճարտարապետ Վ. Պելքը (Waldemar Belck, 1862-1932)՝ Գետաբակի մօտակայքը՝ Գանձակ, շուրջ 300 դամբարան պեղեց: Այս 1892-ին Մոս- կուայի Հնագիտական ընկերութեան կողմէ Ա. Իվանովսկի պեղեց բազմաթիւ դամբարաններ, 91-ը՝ Գետաբակի, Կալա- քենդի, Առաջաճորի, Վանքի եւ այլ վայրերու մէջ:

«Մորկանէն ետք ամենակարեւոր պեղումները կը պատ- կանին Հայկական ազգագրութեան ընկերութեան նախա- գահ Է. Լալայեանին (Երուանդ, 1864-1931, պեղած է բարձ- րաուստ փորագրութեամբ զարդարուած դիակառք, նաեւ կորուստէ փրկած՝ 847 հեքիաթ եւ բազմաթիւ երգեր, 1921- 1931 Պետական թանկարանի վարիչ), որ յայտնաբերած է 500-է աւելի դամբարաններ» (6):



Այժմու Սուրիոյ մէջ հուրիներու Ուրքէշ քաղաքի թագաւորական պալատի պեղումները, ուր գտնուեցան հուրի երաժժչ- տութեան եւ այլ կարեւոր պատմական վրայ փորագրուած ար- խիւներ:



Քարտեպի վրայ Ուրքէշը, այժմ՝ Թել Մոզան, Սուրիոյ հիւսիս- տը, Գամիշլիէն 20 քմ դէպի արեւմուտք:

Հայկական ձիերու եւ ձիակառքերու մասին Մորկան վե- րոնշեալ պեղումներէն դամբարանէ մը շատ կարեւոր յայտ- նաբերում մը կատարած է. ան յայտնաբերած է ԶԱ երրորդ

հազարամեակին պատկանող պրոնզէ գոտիներ, որոնց վրայ որսի տեսարաններ կան, նետաձիգ որսորդը՝ երկու ձիով ձիակառքի վրայ կանգնած: Երկրորդ գոտիին վրայ որ- սորդը կանգնած է երկու ձիերու վրայ: Այս գոտիները կը վե- րահաստատեն ձիերու ընտելացումը Հայկական Լեռնաշ- խարհին մէջ ԶԱ երրորդ հազարամեակէն շատ առաջ, ինչ- պէս նաեւ մարտակառքերու գործածութիւնը՝ որսորդութեան համար, հետեւաբար նաեւ՝ պատերազմի համար (5) էջ 34- 40): Ցարդ պատմաբաններ կ'անտեսեն այս եւ այլ փաստեր, որ ձիակառքը արդէն գոյութիւն ուներ Հայաստանի մէջ Զրիս- տոսէ 3000 տարի առաջ, եւ կ'ըսեն, որ ձիակառքը ԶԱ շուրջ 2000 թուականին ծագում առաւ աւելի հիւսիս՝ այժմու Ռու- սիոյ մէջ...»

Առայժմ Ադոնցէն այսքան, եւ ինչպէս ան նախատեսած էր, վերականխացումէն ետք պեղումները մեր եւ աշխարհի պատմութիւնը յեղաշրջող մեծ անակնկալներ տակաւին կը յայտնաբերեն, որոնց մասին մաս առ մաս ծանօթացանք այս յօդուածաշարքով:

Միտաննի
Մ.թ.ա. 16-րդ դար - Մ.թ.ա. 13-րդ դար

Ընդհանուր տեղեկանք

Մայրաքաղաք	Վաշուգան
Լեզու	Հուրիերէն
Ազգութիւն	Հուրիներ (Հայեր)
Կրոն	Միաստվածութիւն Արևապաշտութիւն

Հուրիները՝ հայեր, միտաննիներու նախահայրերը (7):



ԶԱ շուրջ 2000 թուականի ընծայումի կաւե արձանագրու- թեան պնակիտ՝ Ուրքէշի եւ Նաուարի Ատալէն թագաւորին կողմէ՝ հուրիական Ներկալ չաստուածին տաճարին շինու- թեան առթիւ (Լուվրի թանգարան) (8):

Այս եւ յաջորդ թիւով պիտի կերտնանանք մեր առաջին նախնիներէն հուրիներուն վրայ, որոնց մասին ցարդ նշում- ներ կատարուեցան: Ուիլհելմտիա առցանց համայնագի- տարանը հայերէնով ամփոփ էջ մը ունի «Խուռիներ» անուա- նումով (9), ուր գրած է. «Խուռիներ կամ հարիներ-արարտա- ցիներ (նաեւ՝ հուրիներ, խուրիներ, սուբարիներ), հնագոյն ցեղային խումբ՝ Առաջաւոր Ասիոյ մէջ: ԶԱ 4-3 հազարամ- եակներուն բնակած են հիւսիսային Միջագետքի, Հայկական Լեռնաշխարհի եւ Անդրկովկասի հարաւային շրջաններուն մէջ»: Իսկ անգլերէն Ուիլհելմտիայի Hurrians էջէն (10), որուն բովանդակութիւնը 67 աղբիւրներէ օգտուած է, կը գրէ.

«Հուրիները (տառադարձութեամբ՝ հուր-ուր-րի, այլ ան- անուններն են նաեւ հարի, խուրի, ջուրրի, հուրիթըր), Մեր- ծաւոր Արեւելքի (Հայկական Լեռնաշխարհի)՝ պրոնզէ դարու (ԶԱ 3000-ԶԱ 1200) ժողովուրդներ էին: Անոնք լեզուն հուրո- ուրարտական էր՝ հուրիերէն, եւ կը բնակէին Անատոլիոյ եւ հիւսիսային Միջագետքի մէջ (այսինքն՝ Հայաստանի մէջ, ինչպէս իրենց քարտեքը ցոյց կու տայ)»:

«Ամենամեծ եւ ազդեցիկ հուրիական ցեղը Միտաննի թագաւորութիւնն էր (Զ.Ա. շուրջ 1600-1200, որոնց մասին նախորդի անդրադարձ կատարուեցաւ (տես՝ ԺԱ. մաս (11))... Այս խեղճներուն (ԶԱ շուրջ 1650-1190, հիթիթ) կայս- րութիւնն ալ բաղկացած էր մեծամասնութեամբ հուրի ժո- ղովուրդով: Երկաթէ դարու սկզբնաւորութեան (Զ.Ա. 1200)՝ հուրիները խանութեան էին այլ ցեղերու հետ, որոնք հիմնե- ցին Ուրարտու թագաւորութիւնը: Այժմու հայերը միացումն են հնդեւրոպական խմբաւորումներու՝ հուրիներու եւ ու- րարտացիներու»:

Փաուլօ Մաթիէի (Paolo Matthiae) պեղումները 1964-2011 յայտնաբերեցին ԶԱ 3500-էն 2300 թուական գոյութիւն ունե- ցած արխիւներով հարուստ այժմու Սուրիոյ հիւսիսը գտնը- ւող Էպլա թագաւորութիւնը (տես՝ Ե. մաս (12) եւ վերի քար- տեքը): Այս թագաւորութիւնը կրնայ ծագումնային կապ մը ունենալ հուրիներուն հետ, սակայն ան վերջ գտաւ հուրի- ներուն յարձակումով:

ԼԱԹԵՔՍԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ինչե՞ պատրաստուած է լաթեքսը:

Ամենապարզ պատասխանը՝ լաթեքսը ձգախժժ է: Սովորաբար անոր յիսուհիկը տոկոսը շուր է եւ մօտ քառասուն տոկոսը՝ ձգախժժէ պատրաստուած կիւթ մը:

Լաթեքսը փափուկ, ճերմակ կիւթ մըն է, որ կը գտնուի հատուն ձգախժժի ծառի կեղեւին տակ: Թերեւս զարմանաք, եթէ ձեզի ըստի, որ լաթեքսը բնական կիւթ մըն է, հաշուի առած անոր վերջնական կարծրութիւնն ու զգացողութիւնը, զորս կը տեսնենք անիւներու, ձգախժժէ ձեռնոցներու եւ թեկիսի կօշիկներու մէջ:

Ճշմարտութիւն այն է, որ լաթեքսը, ըստ եուրեան, կու գայ բնութենէն: Նախքան զայն մշակելը, ձգախժժ կարեցընողները (rubber tappers) լաթեքս կը հաւաքեն ծառերէն՝ օգտագործելով մեթօտ մը, որ փոխանցուած է սերունդէ սերունդ:

Ուրկե՞ կու գայ լաթեքսը:

Բնական ձգախժժէ լաթեքսին մեծ մասը կու գայ ձգախժժի ծառի մէկ տեսակէն: Տարբեր ծառերու լաթեքսի բաղադրութիւնը կը տարբերի, բայց ամենատարածուածը Հարավային Ամերիկայինն է: Ծառը կը ծաղկի նաեւ հարավարեւելեան Ասիոյ տնկարաններուն մէջ:

Լաթեքսը կը գոյանայ այս ձգախժժի ծառերու կեղեւին տակ: Երբ զայն կարեցնողները կը հանեն կեղեւը, անոնք կը խճճեն բոյսերուն խողովակները՝ դուրս բերելու համար լաթեքսը՝ կաթնային սպիտակ այր կիւթ: Այնտեղէն անոնք կրնան հաւաքել լաթեքսը եւ ուղարկել զայն՝ մշակման համար:

Ինչպե՞ս կը հաւաքուի լաթեքսը:

Լաթեքսի բերքահաւաքի գործընթացը կը սկսի, երբ ձգախժժի ծառը հատունայ, այսինքն երբ ան մօտ հիւզ տարեկան է: Այս շրջանին ծառը կ'արտադրէ ձգախժժ:

Ձգախժժ արտահանելու համար համապատասխան անձեր կը հանեն ծառի կեղեւէն բարակ շերտեր: Այդպիսով կը խաթարուին լաթեքս պարունակող բոյսերուն խողովակները: Այս ծորաններու խաթարումը թոյլ կու տայ լաթեքսին՝ հոսելու ակօսներու միջոցով: Լաթեքսը այսպիսով կը հաւաքուի մեծ գաւաթներու մէջ:

Ինչպե՞ս լաթեքսի հեղուկը կը վերամշակուի եւ կը դառնայ ձգախժժ:

Ձգախժժի մշակման գործընթացը կը սկսի բերքահաւաքի պահէն, երբ անոնք կը քամեն ձգախժժի ծառերէն լաթեքսային հիւթ:

Այնուհետեւ ընկերութիւնները կը գտնեն լաթեքսը, որպէսզի զայն աւելի ուշ հաւաքեն մեծ տակառներու մէջ՝ յաջորդ հանգրուանին պատրաստելու համար:

Երբ լաթեքսը պատրաստ է վերածուելու ձգախժժէ «ապխտած» կտորներու, ընկերութիւնները թթու կ'աւելցըն-

նեն լաթեքսին: Այս մէկը հեղուկը կը վերածէ խուրճերու (clumps): Այնուհետեւ խուրճերը թիթեղներու մէջ դնելով՝ կ'աղան ջրաղացով: Այդպիսով ջուրը կը հանեն անկէ, եւ ելած թերթերը կարելի կ'ըլլայ չորցնել եւ «ապխտել»:

Վերջապէս, լաթեքսը կը դառնայ նախածծմբարկուած (1): Նախածծմբարկումը կը ներառէ քիմիական գործողութիւններ եւ մեղմ տաքացում՝ ցած ջերմաստիճաններու վրայ: Երբ լաթեքսը նախածծմբարկուած է, զայն տեղափոխելը աւելի յարմար կը դառնայ: Աւելի շատ տաքցնելով՝ կիւթը արդէն կրնայ վերածուիլ սովորական ձգախժժի:

Արհեստական լաթեքս


Վստահաբար ոչ բոլոր լաթեքսները բնական են: Որոշ լաթեքսներ արհեստական են եւ բաղկացած՝ քարիւղէն ստացուած քիմիական կիւթերէ: Այս քիմիական կիւթերը կ'օգտագործուին մշակելու համար արհեստական ձգախժժի փոխարէն, որոնք կը հաւաքուին եւ կը չորցուին, այնուհետեւ կը տեղափոխուին արտադրական գործարան:

Արտադրական գործարանի մէջ արհեստական ձգախժժի փոխարէնները կը խառնուին: Երբեմն անոնք կ'աւելցուին լրացուցիչ բաղադրիչներ՝ ըստ արհեստական ձգախժժի վերջնական արտադրանքին:

Գործարանը կը գլորէ ձգախժժը՝ անոնցմէ կազմելով թերթեր, զորս կը կտրէ հետագայ մշակման համար: Արհեստական մշակման ամենատարածուած մեթօտներն են.

- Արտամղումը (extrusion)
- Ներարկումով ձուլումը (injection molding)
- Ճնշումով ձուլումը (compression molding)

Արտամղման ժամանակ ձգախժժի փոխարէնային միացուցիչը կը դրոյի արտամղիչին մէջ, որ կը տաքցնէ կիւթը եւ կը սեղմէ զայն: Այդ մէկը տեղի կ'ունենայ արտամղիչի տակառին եւ պտուտակին միջոցով: Այնուհետեւ փոխարէնային միացուցիչը փոքր բացուածքի միջոցով անցնելով՝ կը ծծմբարկուի կամ կը մշակուի:



Արտամղիչ

Ներարկումով ձուլումը կը ներառէ ձգախժժի շերտերու խառնում: Բարձր ճնշում գործադրելով՝ շերտերը ստիպո-



ղաբար կը մտնեն կաղապարի մէջ, ուր տաքութիւնը կը ծծմբարկէ ձգախժժը:

Ճնշումով ձուլումը կը սկսի ձգախժժի միացուցիչային նախնական վիճակէն: Այդ տձեւ վիճակը կը ձեւաւորուի կաղապարի մէջ՝ սեղմումով, ճնշումով եւ ծծմբարկումով:

Լաթեքսային կիւթի յատկութիւնները

Վերամշակումէն ետք լաթեքսը սքանչելի ձգախժժէ կիւթ մը կը դառնայ:

Լաթեքսը նշանաւոր է իր առաձգական յատկութիւններով, ինչպէս նաեւ՝ պատռուելու դիմադրութեամբ: Ամենատարածուած յղկիչ կիւթերը չեն վնասուի լաթեքսը:

Յած ջերմաստիճանը սպառնալիք մը չէ, բայց բարձր ջերմաստիճանը կրնայ խնդիր յառաջացնել: 82 աստիճանէն բարձր՝ լաթեքսի մաշում կրնայ սկսիլ: Կարելի է աւելցընել յաւելեալ քիմիական կիւթեր՝ լաթեքսը ջերմութենէն, արելի յոյսէն եւ թթուածինէն պաշտպանելու համար:

Նախընտրելի է նաեւ լաթեքս չօգտագործել քարիւղի արտադրանքներու եւ լուծիչներու հետ միասին: Անոնք կըրնան վտանգել զայն:

Լաթեքսի գործածութիւններ

Լաթեքսը ունի կիրառութիւններու լայն տեսակակի՝ սկըսած առօրեայ իրերէն մինչեւ աւելի մասնագիտացուած կիրառութիւններ:

Բնական ձգախժժէ լաթեքսը առաւել յաճախ կ'օգտագործուի պատրաստելու համար ձեռնոցներ, լողի գլխարկներ, ծամոնները, ներքնակներ (mattress), հոսափողեր (catheter), ապարանջաններ, փուչիկներ եւ շատ մը առարկաներ:

Արհեստական լաթեքսները տարածուած են ծածկոյթներու (coating) արտադրանքներուն մէջ: Չայն կը գտնուէ նաեւ սոսինձներու մէջ՝ շնորհիւ լաթեքսի փոխարէնային մասնիկներուն ջուրի գոլորշիացման ժամանակ կարծրանալու ունակութեան: Արհեստական լաթեքս կարելի է աւելցնել նաեւ կրաղիւսին:

(1) Ծծմբարկումը ձգախժժերու կարծրացման գործընթացներու շարք մըն է:

Ի՞ՆՉ ԿԱՅ ՄԵՐ ԽՄԱԾ ԶՈՒՐԻՆ ՄԷՋ



1. H2O

Ի՞նչ ալ ըլլայ ձեր ջուրին մէջ, անոր հիմնական բաղադրիչը H2O-ն է: Միացութիւն մը, որ կը կազմէ ձեր մարմնի ծանրութեան մինչեւ 75%-ը, այս մէկը կախում ունի ձեր տարիքէն: Այս միացութիւնը կը վերածէ մեր սպառած սնունդները աւելի պզտիկ ու պարզ բաղադրիչներու, զորս ձեր մարմինը կրնայ օգտագործել եւ զանոնք տեղափոխել այնտեղ, ուր անոնք անհրաժեշտ կրնան ըլլալ: Ան նաեւ կ'օգնէ պահպանելու ջուրի եւ աղի հաւասարակշռութիւնը մարմնին մէջ եւ նոյնիսկ կը գործէ որպէս պատուար՝ ցնցումներու եւ հարուածներու, պաշտպանելով ձեր հիւստածքներն (tissues) ու ոսկորները:

2. Այնտեղ ձեր գիտցած «ջուր»-էն աւելին կայ

Թերեւս այս մասին շատ չմտածեք, երբ ցնցուող բանաք տաք լոգանք մը անելու համար կամ ծորակը՝ ձեր ծարաւը յագեցնելու համար, բայց աշխարհի մէջ աւելի քան 2 միլիարդ մարդ կը խմէ այնպիսի ջուր, որ կը պարունակէ թունաւոր քիմիական բաղադրիչներ, կոյուղային ջուրեր, կապար, սնդիկ, վտանգաւոր թափօսներ եւ այլն:

3. Հորի ջուրը

Եթէ ձեր ջուրը կը ստանաք ջրհորէ, պէտք է ստուգեք առկայութիւնը վտանգաւոր կիւթերու, ինչպիսիք են՝ թունաւոր քիմիական միացութիւնները, մանրէները եւ ծանր մետաղները, նախքան զայն օգտագործելու: Այնուհետեւ ամէն տարի ստուգեցէք պարարտանիւթերու եւ որոշ տեսակի պաթթիաներու առկայութիւնը: Աւելի յաճախ ստուգեցէք, եթէ երեխաներ կամ յղի կին կայ ձեր տան մէջ: Որոշ առողջական խնդիրներ, ինչպիսիք են՝ գլխացաւը, փորհարութիւնը եւ յղձաճոռութիւնը, կրնան նշաններ ըլլալ ջուրի ոչ ըմպելի ըլլալուն:

4. Ծորին (ֆլորիտ)

Միացեալ Նահանգներու հանրային ջուրի մօտ երեք քա-

ռորդին աւելցուած է ծորին: Այս հանքանիւթը կը պաշտպանէ ատամները փտելէ: Սովորական չափաբաժինը մէկ միլիոներորդէն պակաս է, եւ այդ մէկը անվտանգ կը նկատուի CDC-ի կողմէ, որ այս մէկը կը նկատէ 20-րդ դարու հանրային առողջութեան ոլորտի ամենամեծ ձեռքբերումներէն մէկը:

5. Նատրիում (սոտիում)

Ոչ միայն աղին, այլ ան նոյնիսկ առկայ է ձեր խմած ջուրին մէջ: Քիչ քանակներով ան լաւ է, բայց զայն շատ կը սպառէք արդէն ուտեստներէն: Եթէ աղի հետ կապուած առողջական խնդիրներ ունիք, օրինակ՝ արեան զերծնշում կամ սրտի անբաւարարութիւն, պէտք է ստուգեք ձեր ջուրի նատրիումի մակարդակը (ե՛ւ ծորակիւր, ե՛ւ շիշերովը):

6. Չառիկ (Arsenic)

Թերեւս շատ վատ բաներ լսած էք անոր մասին, բայց այս մէկը բնական քիմիական կիւթ մըն է, եւ ջուրի որոշ աղբիւրներ, օրինակ՝ ջրհորները, կրնան անկէ պզտիկ չափաբաժիններ ունենալ: Ձեր տեղական ջրամատակարար անձնակազմը պէտք է վերահսկէ անոր քանակութիւնը, բայց եթէ ձեր ջուրը կը ստանաք ջրհորէ կամ այլ բնական աղբիւրէ, լաւ կ'ըլլայ, որ զայն փորձարկեք: Չառիկի բարձր մակարդակները կրնան պատճառել՝ սրտի հիւանդութիւններ, շաքարախտ, քաղցկեղ եւ երեխաներու ուղեղի վնասուածք:

7. Կապար

Ձեր տեղական ջրամատակարարը կրնայ չնկատել զայն, որովհետեւ ան յաճախ կու գայ ձեր տան կամ ձեր թաղամասի հին խողովակներէ: Կապարը կը մտնէ ջուրին մէջ ձեր ծորակէն դուրս գալէ անմիջապէս առաջ: Տնային գտիչ համակարգերը կրնան զայն հեռացնել ձեր ծորակի ջուրէն, սակայն կարելի է ստուգել կապարի մակարդակը եւ կանոնաւոր կերպով փոխել գտիչը (filter): Կապարը երեխաներու եւ չափահասներու մօտ առողջական լուրջ խնդիրներ կրնայ յառաջացնել:

8. Զլոր

Այս մէկը կ'օգտագործուի հանրային ջրային համակարգերուն մէջ մանրէները սպանելու համար: Երբեմն կ'օգտագործուին նաեւ քիմիական այլ կիւթեր, սակայն ջուրը ամենատարածուածն է: Ան անվտանգ է ցած մակարդակներով գտնուելու պարագային, բայց կրնաք նկատել անոր թեթեւ հոտը կամ համը:

9. Չուման համակարգեր

Որակեալ, լաւ պահպանուած համակարգը կրնայ հեռու պահել ծանր մետաղները եւ պաթթիաներուն մեծ մասը: Սակայն անոնք ծանր տեսակները կրնան նոյնիսկ հեռացնել ծորիկը, որ կը պաշտպանէ ձեր ակոսներն ու լիւստերը:



10. Ծիշերու մէջ լեցուցած ջուրը

Ան սովորաբար անվտանգ է, սակայն ոչ աւելին, քան՝ ծորակի ջուրը: Յիշեցէք, որ բացի յաւելեալ ծախսերէն՝ շիշերու մէջ լեցուցած ջուրին մէջ յաճախ կը բացակայի ձեր ակոսները պաշտպանող ծորիկը:

11. Ե՞րբ եռացնել ջուրը

Եթէ վտանգ չէք ձեր ջուրին ապահով ըլլալուն (ջրհեղեղի, կտորուած խողովակի կամ այլ բանի պատճառով) կրնաք զայն եռացնել: Սա պէտք է ձերբազատ ջուրը բոլոր այն պաթթիաներէն, ժահրերէն եւ այլ օրկանիզմներէ, որոնք կրնան ձեզ հիւանդացնել: Մէկ վայրկեանը բաւարար է պէտք եղած գործը կատարելու համար, իսկ 3 վայրկեանը, եթէ ծովու մակերեսէն 2000 մետրէն աւելի բարձրութեան վրայ կը գտնուիք:

12. Ծերմկցնել՝ (bleach) ջուրը:

Թեւ թիչ մը տարօրինակ կը հնչէ, բայց այս մէկը EPA-ի կողմէ հաստատուած միջոց մըն է արտակարգ իրավիճակներու պարագային ջուրը ախտահանելու կամ ջրհորի ջուրի մէջի մանրէները մաքրելու համար: Ընդամենը 6-8 կաթիլը մէկ կալոնին մէջ դնելով (կախուած անոր զօրութենէն)՝ յաջողութեան կը հասնիք, անկէ աւելին կրնայ վտանգաւոր ըլլալ: Օգտագործեցէք պարզ սպիտակցեցնող դեղ մը, որ չի պարունակէ բոյրեր կամ լրացուցիչ մաքրող կիւթեր: Խառնեցէք ջուրին եւ ձգեցէք 30 վայրկեան:

Աղբիւր՝ «Medical News Today»

ԼԵՅԼԱԻԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԳՊՐՈՑԻ...

Շարունակում 3-րդ էջին

ստեղծուի աշխատանքային նոր կարելիություններ: Այս յոյս յայտնեց, որ շուտով ընթացք կ'առնէ Լեյլալանի մարզադաշտի կողքին գտնուող ՀԱԸՄ-ի ակումբի նորոգության աշխատանքները՝ բարերարությամբ Րաֆֆի Տեր Մարտիրոսեանի, որպեսզի եւ միութենը վերսկսի իր գործունեությունն եւ յառաջիկայ տարի ամառային դպրոցը ունենալ անելի յարմար պայմաններ:



Աւարտին «Գարակեօգեան» հաստատության տնօրէն Սերոբ Օհանեան յայտնեց, որ Լեյլա Գարակեօգեանին անունը կրող ակումբի հաստատումէն տասնեակ տարիներ ետք հիանալի է տեսնել Գարակեօգեան ընտանիքի Լեյլալանի ծաղկման ծրագրի շարունակությունը: Օհանեան ըստ, որ այս հանդէս ու մթնոլորտը կը նպաստեն, որ միասին շարունակենք խօսիլ հայերէն, երգել հայերէն եւ ուրախ ու առողջ միջավայրի մէջ ապրիլ հայրենի: Օհանեան հաստատեց, որ «Գարակեօգեան» հաստատությունը պիտի շարունակէ զօրակցիլ Լեյլալանի մէջ օգտաշատ ծրագիրներու յաջողութեան ճիգերուն:



Ամառային դպրոցի հանդէսը փակուեցաւ Ս. Երրորդութեան մատրան հոգեւոր հովիւ Միջայել քնի. ՏԵՄԻՐՈՅԵԱՆԻ «Պահպանիչ»-ով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԻԵՐԸ, ՉԻԱԿՈՐ...

Շարունակում 4-րդ էջին

Իտալացի հնագէտ Ճիորճիո Դուչելլաթի (Giorgio Buccellati) 2002-ին Լատին Սուրիոյ հիւսիսը, Գամիշլիէն 20 քմ դեպի արեւմուտք, Թէլ Սոգակի մէջ գտաւ ու պեղեց հուրրիական Ուրբէշ քաղաքը (տես՝ Նկարներ 5, 6 եւ 7 (13)): «Ուրբէշը հուրրիներու քաղաքական եւ կրօնական կեդրոն մըն էր՝ Մերձարտրիկէի քիչ ծանօթ այս վաղեմի ժողովուրդին: Պեղումները յայտնաբերեցին հզօր քաղաքային քաղաքակրթութիւն մը՝ մարդկային պատմութեան արշալոյսին ծագումին հետ, 5000 տարի առաջ:

«Այս հուրրիական շուրջ 4000 տարուան կրօնական երաժշտութիւնը ցարդ պեղուած աշխարհի ամենահին ձայնագրութիւնն է, որ գտնուեցաւ Ուկրաինայի մէջ, այժմու Լաթաքիայի մօտ, Սուրիա (14): Անպայման այստեղ գտնուելու մտիկ ըրէք, քանի որ հայկական շարական կը իշխեցնէ: Անելի՛ն՝ յաջողրի:

19 յունիս 2022
Շար. 18
haroutchekijian.wordpress.com

* Լուսարանությունները հեղինակին

- (1).- <https://www.aztagdaily.com/archives/479380>
- (2).- <https://news.am/arm/news/707232.html>
- (3).- «Ճարտարապետութիւն Հինարարութիւն», թիւ 1-2, յունուար-փետրուար 2017, Երեւան, էջ 46:
- (4).- «Պատմական Ուսումնասիրություններ», Նիկողայոս Աղոնց, Ա. Դուկա-սեան հրատարակութիւն, Փարիզ, 1948 (յետ մահու յոյս տեսած):
- (5).- «Երկեր. Քննական Պատմութիւն Հայոց», Նիկողայոս Աղոնց, Դ. հատոր, ԵՊՀ հրատարակութիւն, Երեւան, 2009, 715 էջ:
- (6).- https://hy.wikipedia.org/wiki/Երուանը_Լալայեան
- (7).- <https://hy.wikipedia.org/wiki/Միտանիք>
- (8).- https://mg.wikipedia.org/wiki/Sary:Foundation_tablet_dedication_to_God_Nergal_by_Hurrian_king_Atalshen_king_of_Urkish_and_Nawar_Habur_Bassin_circa_2000_BC_Louvre_Museum_AO_5678.jpg
- (9).- <https://hy.wikipedia.org/wiki/Խուրիներ>
- (10).- <https://en.wikipedia.org/wiki/Hurrians>
- (11).- <https://www.aztagdaily.com/archives/457710>
- (12).- <https://haroutchekijian.wordpress.com/2019/09/18/հայաստանի-ձիւր-ձիւր-հերոսները-հեծ-13/>
- (13).- <http://urkesh.org/main/main%5E.htm>
- (14).- http://urkesh.org/music/Hurrian_music_chorus.mp3

ՍՈՒՐԻՈՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ...

Շարունակում 3-րդ էջին

Անոնց հաշտ աչքով պիտի չդիտեն Լատին Սուրիա-Թուրքիա յարաբերություններու կարգաւորման թոյլ հաւանականութիւնն անգամ (Սուրիան քաջ գիտէ, թէ ՕԹԱՆ-ի անդամ Թուրքիան ինչպիսի՜ կողմերու շահերուն կրնայ ծառայել), որովհետեւ Միջին Արեւելքի մէջ ռուսական միջնորդութեամբ Լատինատեւոտող նման կարգաւորում մը պիտի տկարացնէ Միացեալ Նահանգներու եւ Իսրայէլի ազդեցութեան օղակները:

Ամիսներ առաջ Իսրայէլը հրթիռակոծեց Դամասկոսի միջազգային օդակայանը, սակայն Դամասկոս, առանց խուճապի մատնուելու, կարճ ժամանակ մը ետք վերանորոգեց զայն: Այ-

սօր Իսրայէլ այլ հրթիռակոծումով մը կը սպառնայ Հալէպը արտաքին աշխարհին կապող միակ քաղաքացիական օդակայանին:

2022-ի սկիզբէն ի վեր այս Իսրայէլի 22-րդ հրթիռակոծումն է, վերջին անգամ ան հրթիռակոծած էր Թարթուսի եւ Համայի կարգ մը վայրեր:

Քաղաքացիական օդակայաններ հրթիռակոծելով, սակայն, Իսրայէլի թիրախը կը դառնայ Լատին Սուրիոյ քաղաքացին:

Միացեալ Նահանգներ-Իսրայէլ գործակցութիւնը յստակ կ'երեւի սուրիական տագնապի լուծման խափանման իրենց

քայլերուն մէջ, մէկը՝ մերթ քնդ մերթ հրթիռակոծելով սուրիական տարբեր վայրեր, Նոյնիսկ՝ ոչ զինուորական, միւսը՝ քրտական գործօնը օգտագործելով Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ:

Վերջին տասը տարիները ցոյց տուին, որ Սուրիոյ արտաքին քաղաքականութիւնը սպառնալիքներէ չ'ազդուիր: Պատերազմի ողջ ընթացքին ու տագնապի լուծման տարբեր փուլերուն Սուրիան առաջնորդուած է ու կը շարունակէ առաջնորդուիլ ազգային ու պետական իր շահերէն՝ հասնելու լիարժէք, ոչ թէ ժամանակաւոր, խաբուսիկ խաղաղութեան:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԳՈՐԿՉՈՆԱԿԱՆ

1. Նախա մեծար - Լրտես:
2. «Կարի ճարթուս» - Սուրբական:
3. Ծառի կոճի - Կուսար:
4. Ձայնակիչ - Հայաստանի հնավայրերէն - Ահաւ սիկ:
5. Հաստատութեան վարիչ - Սարսափ ելի:
6. Յունական դիցարանի սիրոյ աստուածը - Վարունգ:
7. Շաղկապ - Պոլսահայ մեծատուն:
8. Երգչիկ թռչուն - Ձայնակիչ:
9. Իգական օտար անուն - Խօսք մտիկ ըրէ:
10. Այբուբենէն - կանգուն երկանա քար - Մորթային բիծ:
11. Կատուազգի գազան - Կաթնու - Երոպական գետ:

ՈՐՈՎԱԳՅՈՒՄ

1. Ծանրակրթութիւն - Ս. Գրային մարգար:
2. Իգական անուն - Իգական օտար անուն:
3. Ձուքայ կի նուրբ տախտակ - Կուստան Զարեանի երկերէն՝ «... Պատկեր»:
4. Տարածքի միատար - Ճարտարութիւն:
5. Յունական դիցարանի պատերազմի աստուածը - Փոքրացնող մասնիկ:
6. Մեծարժէք - Այգամապիլ:
7. Ցուրտ - Տարի - Կէտ՝ պատկերազարդ:
8. Այբուբենէն - Դ. դարու հերետիկոս:
9. Այս հար - Տալի ճիչ:
10. Եկան թայն - Անուշ - Բուռ:
11. Ամօթահար - Երոպական մայրաքաղաք:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

			4	9		7	3				
4							2				
		6				8					
2							9				
			5						8		
3	8			6						4	
6			3		9			7			
		7									
	9		8		6			1	3		

Երրորդական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գնացանց բաղկացած է իւրաքանչիւր 9 քառակուսի հաշտող 9 բաժիններէ (3x3): Բացառուի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսի մէջ թուանշան մը գետնելու՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիներ իւրաքանչիւր բաժին ունենայ ձեռք թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետնելու են:

ՆԱԽՈՐՔ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒ ԼՈՒԹՈՒՄՆԵՐԸ

1	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
2	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
3	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
4	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
5	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
6	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
7	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
8	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
9	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
10	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս
11	Մ	Լ	Գ	Պ	Կ	Ե	Լ	Մ	Ս	Ս	Ս

«ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԿԱՊԱՆՔՆԵՐ ԶԵՆ...»

Շարունակում 3-րդ էջին

Պաշտօնագրկուծի համար անհրաժեշտ է, որ Ազգային ժողովը անվստահութիւն յայտնէ վարչապետին: Գործընթացին սկսելու իրաւունք ունին 107 պատգամաւորներու առնուազն մէկ երրորդը՝ 36 պատգամաւոր: Նախագիծին պէտք է ընկերանայ միաժամանակ նոր վարչապետի մը թեկնածութիւնը: Անվստահութեան հարց կարելի է արծարծել կառավարութեան կազմութեան առնուազն մէկ տարի ետք, այս պարագային՝ 2 օգոստոսէն սկսեալ: Որոշումը կ'ընդունուի պատգամաւորներու պարզ մեծամասնութեան քուէով, այսինքն՝ առնուազն 54 ձայնով:

Ընդդիմութիւնը այժմ ունի 35 ձայն: Եթէ այս թիւը 36-ի վերածելը յարաբերաբար դիրքին կարելի է համարել, սակայն անվստահութիւն յայտնելու համար իշխանական ճամբարէն գեթ 18 քուէներու ապահովումը անելի դժուար է: Անվստահութիւն յայտնելու պահանջը պէտք է քննուի 48-էն 72 ժամերու ընթացքին (2-էն 3 օր): Եթէ այս 2-էն 3 օրերու ընթացքին ժողովրդային մնայուն ճընշումը ստիպէ մեծամասնական պատգամաւորներու կարելի թիւի մը քուէարկութիւնը ի նպաստ անվստահութեան, պաշտօնագրկուծի կարելի կը դառնայ: Չախողութեան պարագային, յաջորդ անվստահութեան պահանջը կարելի է ներկայացնել առնուազն վեց ամիս ետք:

Վարչապետին անվստահութիւն յայտնելու այս գործընթացը սահմանադրական պահանջ է: Տեսականօրէն կարելի է այս պահանջը ներկայացնել 2 օգոստոսէն սկսեալ, սակայն առանց վստահօրէն ապահոված ըլլալու անոր յաջողութիւնը, անկիւ կրնայ վերածուիլ արկածայինը: Գործընթացին ու անելի գորացնել գործող իշխա-

նութեան դիրքերը:

Իշխանափոխութիւնը անհրաժեշտութիւն է կասեցնելու համար Արցախէն եւ Հայաստանի ինքնիշխանութեան, հողային ամբողջականութեան, ապահովական դրութեան թաւազլոր անկումը: Բնականաբար՝ որքան շուտ, այնքան լաւ: Շտապողականութիւնը սակայն կրնայ յանգիլ աղետի, ուրիշ խօսքով՝ յօնքը շինելու փոխարէն, աչք հանելու:

Լսեց Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակէն հնչող ուղերձը. «Սահմանները կապանքներ չեն, շղթաներն էլ՝ կը փշրուեն»:

Հայաստան, Արցախ ու սփիւռք եռամիասնութիւնը համբերութեամբ կառուցենք, ազգը միաւորենք, դարձնենք ճշունի ու պահանջատիրութեան հզօր միջոց ու ապահովենք մեր պատմութեան թելարդուած յարթանակը, որուն ոտնաձայնը կը լսեր, անելի քան հարկաւոր մը առաջ, նահատակ բանաստեղծը՝ Դանիէլ Վարուժան:

AFHIL HEALTH CLUB
Bourj Hamoud

EVERY SATURDAY

- Taekwondo 1:30 - 2:30
- Gymnastic 12:00 - 1:00
- Washu 11:00 - 12:00
- Hip Hop 10:00 - 11:00

BOURJ HAMMOUD ARIN CENTER
3rd FLOOR
01 255023
www.afhil.com

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԵԼԻ
ՆԱՍԵՐ ՍԱԼԵՀ ԱԹԻԷ
ԵՐԿՐՈՐԳ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ
ՀԱՆԳԻՍԱՅՍԱԻ ԱՌԱՋԻՆ



Կազմակերպութեամբ «Ա. ԹԵ. ԵԼ.»-ին, Նախորդ շաբաթավերջին տեղի ունեցաւ Լիբանանի միջազգային ռելիին՝ հովանաւորութեամբ հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի:




Երկրորդ դիրքը գրաւեց Պասել Պու Յամտան-Ֆիրաս Էլխաս զոյգը, մինչ երրորդ հանդիսացաւ՝ Թամեր Ղանտուր-Սալիմ ժըլէլաթի զոյգը:

Նշենք, որ շաբաթ, 3 սեպտեմբերին, ռելիին երկրորդ օրը, լիբանանցի Ռոժէ Փըղալի, ինքնաշարժ արկած մը ունենալով, քաշուեցաւ անկէ:

Ռելիին աւարտին տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւնը՝ ներկայութեամբ նախագահ Աունի ներկայացուցիչ, գրասալարչութեան նախարար Ռալիտ Նասարի եւ կազմակերպիչ ակումբին պատասխանատուներուն:

ԼԱՅՓՑԻԿԻ ՄԱՐԶԻԶԻՆ
ՊԱՇՏՕՆԸ՝ ՎՏԱՆԳՈՒԱԾ

Գ Ե Ր մ ա ն կ ա ն մարզական մամուլին համաձայն, Գերմանիոյ ֆուտբոլի ակումբներու թիւերը խումբերէն Լայփցիկ կը մտածէ իր մարզիչը պաշտօնազրկելու մասին:



Նշուեցաւ, որ ակումբին պատասխանատուները կը մտածեն պաշտօնական ընել Տոմենիցո Թետեսցուն՝ իրավիճակը շտկելու համար:

ԿԼԵՅՁԵՐՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ
ՊԱՏՐԱՍ Է ԾԱԽԵԼՈՒ
ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏԸ



Ամերիկացի գործարարներ Կլեյզերներու ընտանիքը, պատրաստ է ծախելու Մանչեսթըր Եւնայթըտ ֆուտբոլի ակումբը, եթէ ստանայ 4,35 միլիարդ ֆունտ շտեյն (3,75 միլիոն փաունտ) սկսելու առաջարկ մը, այս մասին յայտնեց անգլիական մարզական մամուլը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ
ԼԻԲԱՆԱՆԻ Ա. ԵՒ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԵՐՈՒ
ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ՍԿՍԱՆ



Նախորդ շաբաթավերջին մեկնարկը տրուեցաւ Լիբանանի ֆուտբոլի Ա. եւ Բ. դասակարգերու ախոյեանութիւններուն, երբ կատարուեցան Ա. հանգրուանի մրցումները:

Ստորեւ՝ կու տանք մրցումներուն թեքնիք արդիւնքները.

- Ա. ԴԱՍԱԿԱՐԳ
Լըժմէ-Սաժէն՝ 2-0, Պըրժ-Սալամ Չղարթա՝ 2-1, Ահու-Ախա Ահլի Ալէյ՝ 2-1, Անսար-Շապապ Սահել՝ 2-2, Սաֆա-Շապապ Ղազիէ՝ 1-1, Թատամոն Սուր-Թրիփոլի՝ 0-0:
- Բ. ԴԱՍԱԿԱՐԳ
Պընթ ժըպէյլ-Ռիատի Ապպասիէ՝ 2-1, Ահլի Նապաթէ-Սփորթինկ Ռիատի՝

ԹԵՆԻՍ. «ԵՈՒ. ԵՍ. ՕՓԸՆ»
- ԽԱՉԱՆՈՎ ԱՊԱՀՈՎԵՑ
ՔԱՌՈՐԳ ԱԻԱՐՏԱԿԱՆԻ ԻՐ ՏՈՄԱԸ
- ՏԻՏՂՈՍԱԿԻՐ ՄԵՏՎԵՏԵԻ
ԳՈՒՐՍ ՄՆԱՅ ՄՐՅԱՇԱՐՔԷՆ

Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցող «ԵՈՒ. ԵՍ. ՕՓԸՆ»-ի թենիսի կրան շլէմի միջազգային բաց մրցաշարի Դ. հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, աշխարհի ընդհանուր դասաւորման առաջին դիրքին վրայ գտնուող ռուս Տանիլի Մետվետե, որ անցեալ տարուան տիտղոսակիրն է, դուրս մնաց մրցաշարքէն՝ 6-7, 6-3, 3-6 եւ 2-6 արդիւնքով պարտութիւն մը կրելով աստղաբաշխի Նիք Զիրկիուսէն (դասուած՝ 23-րդ):



Այս մրցաշարքին աւարտէն ետք, թենիսի միջազգային ֆետերասիոնին կողմէ հրապարուելիք Նոր դասաւորման մէջ, Մետվետե պիտի կորսնցնէ պարագըլուսի իր դիրքը:



Անոր փոխարէն առաջին դիրքը գրաւելու յոյս ունին Ռաֆայէլ Նատալ (3-րդ), Քարլոս Ալքարաս (4-րդ) եւ Զասփեր Ռուուտ (7-րդ):

Ռեն Խաչանով (27-րդ)՝ սպանացի Փապլո Քարէնիո Պուսթայի (12-րդ) դէմ արձանագրելով 4-6, 6-3, 6-1, 4-6 եւ 6-3 արդիւնքով յաղթանակ մը:

«ՖՈՐՄՈՒԼԱ-1»
ՄԱՔՍ ՎԵՐՍԹԱՓԵՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ
ԸԼԼԱԼՈՎ ԱՐՉԱՆԱԳՐԵՑ
ՅԱՋՈՐԳԱԿԱՆ ՉՈՐՍ ՅԱՂԹԱՆԱԿ

Աշխարհի ախոյեան Նետերլանտացի Մաքս Վերսթափենի յաղթանակով աւարտեցաւ նախորդ շաբաթավերջին տեղի ունեցած Նետերլանտներու կրան փրին, որ կ'իյնայ «Ֆորմուլա-1»-ի աշխարհի ախոյեանութեան ծիրին մէջ:



Անոր ետին յաջորդաբար երկրորդ եւ երրորդ դիրքը կը գրաւեն Շարլ Լեքլըր («Ֆեռարի») եւ Սերճիո Փերեզ («Ռետ Պուլ»), որոնք ապահոված են 201-ական կէտ:

Նշենք, որ տարեշրջանի աւարտին մնացած է եօթը հանգրուան:

ԿԱՐՏԱՂՔԻՐԻ ԳՊՐՈՅԻ
ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԸ
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ
ՖԵՏԵՐԱՄԻՈՆԻՆ ԿՈՂՄԷ



Հայաստանի ֆուտբոլի աղջկանց ախոյեանութեան մասնակից Գեղարքունիքի մարզի Վարդէնիս համայնքի Կարճաղբեր գիւղի Ա. Գրիգորեանի անուան միջնակարգ դպրոցի 12 տարեկանէն վար խումբը իր կատարած բոլոր՝ 19 մրցումներուն յաղթանակ արձանագրելով, գրաւեց առաջին դիրքը:

ՃԱՏՐԱԿ. «ՏՈՒՊԱՅ-ՕՓԸՆ»

ՍԱՄՈՒԷԼ ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ
ԲԱԺՆԵՑ 7-14-ՐԳ ԳԻՐՔԵՐԸ



Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ աւարտած «Տուպայ-Օփըն» ճատրակի միջազգային մրցաշարքին, Հայաստանի ներկայացուցիչներուն մէջ լաւագոյն արդիւնքը արձանագրեց Սամուէլ Տեր Սահակեան:

Հայաստանի հաւաքականին մաս կազմող Տեր Սահակեան առաւելագոյն 9 կէտէն 6,5 կէտ ապահովելով բաժնեց 7-14-րդ դիրքերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ 15 ՏԱՐԵԿԱՆԵՆ
ՎԱՐ ՏՂՈՑ ՖՈՒԹՊՈԼԻ
ՀԱԻԱՔԱԿԱՆԸ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԷՆ



Հիւսիսային Մակեդոնիոյ մայրաքաղաք Արժիւթի մէջ տեղի ունեցող «ԵՈՒ. Է. Ե.Ֆ. Ա.»-ի 15 տարեկանէն վար ֆուտբոլի գարգացման մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն Հայաստանի, Հիւսիսային Մակեդոնիոյ, Զոսովոյի եւ Մալեզիոյ 15 տարեկանէն վար հաւաքականները:

ԳԱՆՁԱԿԻ ՄԷՋ ԹՈՒՐԲ-ԱԶԳԻԷՅՃԱՆԱԿԱՆ ԹՈՒՉՔԱՅԻՆ ՌԱԶՄԱՓՈՐՉԵՐ

Երեկ Գանձակի մէջ սկիզբ առած է թուրք-ազրպէյճանական «Թուրկ Զարթալի-2022» մարտավարական-թռիչքային միացեալ ռազմափորձերը: Այս մասին կը հաղորդէ Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը:



Այս նպատակով վերջերս Թուրքիոյ օդուժի օդաչուներու եւ թեքնիք հարցերով անձնակազմի առաջին խումբը մեկնած էր Ազրպէյճան:

Երեկ Գանձակի մէջ «Թուրկ Զարթալի-2022» մարտավարական վարժանքներու մեկնարկի ձեռնարկի ընթացքին Ազրպէյճանի օդուժի զօրավար Չաուր Ռուսթամով ընդգծած է, որ նմանօրինակ ռազմափորձերու կատարումը կարեւոր նշանակութիւն ունի միացեալ գործողութիւններու ծրագրման, համագործակցութեան եւ մարտական գործողութիւններուն մէջ զինուորներու միջեւ համագործակցութեան բարձրացման, ինչպէս նաեւ որոնողական ու փրկարարական առաջադրանքներու կատարման տեսանկիւնէն:

Վարժանքներու մեկնարկի հանդիսութեան տեղեկութիւն տրուած է անոնց նպատակին վերաբերեալ, այն է՝ զինանձնակազմի մարտական պատրաստականութիւն, տեղաբաշխում, առաջադրանքներու կատարում եւ օդուժի կիրարկում:

Ռազմափորձերու մասնակից զինուորներու, սպառազինութեան, օդանաւերու տեսակի եւ քանակի մասին չի հաղորդուիր:

ԹՈՒՐԲԻԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ ՕԳՈՒԺԸ ՄԵՂԱԳՐԱԾ Է ՕԹԱՆ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԹՐԲԱԿԱՆ ՕԳԱՆԱԷՐ ՈՐՍԱԼՈՒ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՐ

Թուրքիան Յունաստանը մեղադրած է ՕԹԱՆ-ի առաքելութիւն կատարող թրքական ծովային պարեկային օդանաւը որսալու փորձի համար: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով «Անատոլու»-ին:



«Անատոլու»-ը, յղում կատարելով Թուրքիոյ պաշտպանութեան նախարարութեան մէջ իր ունեցած աղբիւրներուն, կը գրէ, թէ «Յունաստան «կտրուկ կերպով աւելցուցած է Եգեական եւ Արեւելեան Միջերկրական ծովերուն մէջ իր յարձակողական վարմունքը», Թուրքիոյ օդային ու ջրային տարածքներուն մէջ խախտումներու դէպքերու քանակը նախորդ տարուան 1123-ին համեմատ զգալի աճ արձանագրած է՝ ընթացիկ տարուան միայն 8 ամսուան ընթացքին հասնելով 1616-ի:

Ըստ թրքական լրատու գործակալութեան, 15 օգոստոսէն արձանագրուած են յոյն օդաչուներու կողմէ պարեկային ծառայութիւն կատարող թրքական օդանաւերու հետ ապակողման 14 միջադեպեր, որոնցմէ վերջինը տեղի ունեցած էր 1 սեպտեմբերին:

«Յունական օդուժը փորձած է որսալ թրքական ծովային պարեկային օդանաւը, որ առաքելութիւն կը կատարէր ՕԹԱՆ-ի՝ Միջերկրական ծովու անվտանգութեան ապահովման ուղղուած «Սի Կարտիդը» առաքելութեան ծիրին մէջ: Թուրքիոյ ազգային պաշտպանութեան նախարարութեան մէջ ընդգծած են, որ օդանաւը զինուած չէ եղած: Նախարարութեան յայտնած են, որ յունական կողմի գործողութիւններուն տրուած է համարժեք պատասխան», կը նշուի հաղորդագրութեան մէջ:

ԵՐՐՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

Երրոզական Միութեան արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատարի բանբեր Փիլիք Սթանօ, մամլոյ ասուլիսի ընթացքին պատասխանելով հարցումի մը, ըսաւ. «Թրքական քաղաքական ղեկավարութեան կողմէ Յունաստանի եւ յոյն ժողովուրդին դէմ թշնամական այս յայտարարութիւնները (...) մեծ մտահոգութիւն կը պատճառեն»:

«Թուրքիայէ կ'ակնկալենք, որ հետտորաբանական մագլցում տո կանգնի եւ յանձնառու ըլլայ բարի դրացիական յարաբերութիւններու բարելաման», աւելցուց ան՝ աւելցնելով. «Յունաստանի հետ յարաբերութիւններուն մէջ պէտք է առկայ հարցերը խաղաղ ճամբով լուծել երիտօտութեան ճամբով, բարի կամեցողութեամբ, միջազգային օրէնքին համաձայն եւ բարի դրացիական յարաբերութիւններու սկզբունքի համաձայն»:

«Յունաստանը Երրոզական Միութեան անդամ պետութիւն է, եւ պէտք է յարգել Երրոզական Միութեան անդամ պետութիւններու հողային ամբողջականութիւնը», նշեց Սթանօ:

ՔԱՊՈՒԼԻ ՄԷՋ ՌՈՒՍԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Ռոյթթըր» լրատու գործակալութիւնը հաղորդած էր, որ երկու ռուսեր, որոնցմէ մէկը՝ դիւանագետ մը, իսկ միւսը՝ անվտանգութեան խումբի անդամ, վիրաւորուած են, երբ Քապուլի մէջ Ռուսիոյ դեսպանատան մօտ պայթում մը տեղի ունեցած է:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով յայտնեց, որ յարձակումէն ետք դեսպանատան պաշտպանութիւնը ամբարկուած է, եւ թալեպանները ապահովական մարմիններու յանձնելու անոյամբ բերած են շրջան:

«Մոսկուա կը յուսայ շուտով գտնել Քապուլի մէջ ռուսական դեսպանատան մօտ ահաբեկչական յարձակումի հեղինակները», նշեց Լաւրով:

Քրեմլի բանբեր Տմիթրի Փետրով պայթումը կոչեց «ահաբեկչական արարք մը, որ բացարձակապէս անընդունելի է»:

Քապուլի ոստիկանապետ Խալիտ Չաուրան յայտնեց, որ պայթումը անձնասպանական գործողութիւն մըն էր:

ԵՐՐՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶԿՐՅԱԼ...

Շարունակուած Ա. Էջէն

Յունգարիոյ արտաքին գործոց նախարար Փիլիք Սերաթօ ըսաւ. «Երրոզական Միութիւնը վերջ պիտի տայ Ռուսիոյ հետ մուտքի արտօնագրի հրապարակումը դիւրացնելու համաձայնութեան, եւ ատոր համար երրոզական պետութիւններու բաւարար մեծամասնութիւն գոյացաւ, սակայն վերջնական արդիւնքը այն է, որ ռուս քաղաքացիներու Երրոզական Միութեան անդամ երկիրներ մուտք գործելու ընդհանուր արգելք պիտի չըլլայ»:

Երրոզական Միութիւնը հինգշաբթի օր յայտարարած էր, որ Ռուսիոյ հետ մուտքի արտօնագրի ստանալու համար ընծայուած դիւրութիւնները առկախուած են, սակայն ռուս քաղաքացիներու որոշ հատուած մը պիտի չարտօնակէ Երրոզական Միութեան մուտքի արտօնագիր ստանալ կարողանալ:

Ռուսիան նախապէս զգուշացուցած էր, որ «Շեկնէնան» մուտքի արտօնագիրներու արգելքը շատ կտանգաւոր է, եւ եթէ այդ որոշումը որդեգրուի, ուղղակիօրէն ժողովուրդին դէմ ուղղուած պիտի ըլլայ:

ՄԻՐՁՈՅԵԱՆ ՌԻ ԼԱԻՐՈՎԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Նշելով, որ այս տարի կը լրանայ Յայաստանի ու Ռուսիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու 30-ամեակը եւ Բարեկամութեան, համագործակցութեան եւ փոխադարձ օգնութեան պայմանագրի 25-ամեակը, կողմերը գոհունակութիւն յայտնած են բոլոր, այդ շարքին՝ ամենէն բարձր մակարդակներուն վրայ հաստատուած աշխուժ երկխօսութեան, ՀԱՊԿ, ԵԱՏՄ, ԱՊՀ եւ այլ միջազգային կազմակերպութիւններու շրջանակներուն մէջ սերտ համագործակցութեան գծով:

«Չրուցակիցները քննարկած են շրջանային անվտանգութեան եւ կայունութեան խնդիրներ լայն շրջանակ: Միտքեր փոխանակուած են Յայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ սահմանագիտական եւ սահմանային անվտանգութեան հարցերու, շրջանին մէջ տնտեսական եւ փոխադրական երթուղիներու անվտանգութեան ապաշրջափակման աշխատանքներու վերաբերեալ:

Յանգամանակից անդրադարձ կատարուած է Յայաստան-Ազրպէյճան յարաբերութիւններու կարգաւորման, Լեռնային Ղարաբաղի տագնապին վերաբերող հարցերու:

«ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԱԹՈՒԻ ...»

Շարունակուած 2-րդ էջէն

Ռայի պատրիարքը շեշտեց, որ նախագահական աթոռի թափուր մնալը հիմնովին մերժելի է՝ նկատել տալով, որ սահմանադրական առումով անիկա ուղղակիօրէն կապուած է հանրապետութեան նախագահի հրաժարականին կամ մահուան: «Քաղաքական ուժերուն պարտականութիւնն է համաձայնի անձնաւորութեան մը շուրջ, որ կը կրէ այն յատկանիշները, որոնք բազմիցս կը կրկնուին:

Իսկ խորհրդարանը թող նախաձեռնէ ընտրելու հանրապետութեան նախագահ մը՝ երկրին սահմանադրական ժամկետին շրջագծին մէջ», ըսաւ ան:

Ռայի պատրիարքը հաստատեց, որ հանրապետութեան նախագահութեան հետ խաղեր կատարելը ինքնին հանրապետութեան հետ խաղեր կատարել է, «եւ պէտք է զգուշանալ այդ դուռը բանալէ», նշեց ան:

Ռայի պատրիարքը ընդգծեց, որ մարտի պատրիարքութիւնը ուղղակիօրէն առնչուած է այս գործընթացին եւ ամեն տեսակի գործընթացի, որ կայ ունի Լիբանանի ճակատագրի հետ: «Մարտի պատրիարքութիւնը կոչ կ'ուղղէ բոլորին վերջ տալու արկածախնդրութիւններուն եւ սակարկութիւններուն, որոնք հանրապետութեան նախագահը կը նկատեն փետուր մը՝ զայն ենթակա դարձնելով քաղաքական, համայնքային եւ յարանանակական փոթորիկներու», շեշտեց ան:

Ռայի պատրիարքը դիտել տուաւ, որ հանրապետութեան նախագահութիւնը այն հաստատուն սինն է, որուն վրայ հիմնուած է Լիբանանի պետութիւնը: «Եթէ այդ սինը չարաշահուի ենթարկուի, ապա ամբողջ կառոյցը փլու կու գայ: Մենք տակաւին կը յուսանք, որ քաղաքական ուժերն ու երեսփոխանական պայքարները զարթօնք մը կ'ապրին եւ կը նախաձեռնեն նախագահական ընտրութիւն կատարելու», ընդգծեց պատրիարքը:

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅՆԵԱԼ ՎԱՐԺՄԱՐԱՆ 2022-2023 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ազգային Միացեալ վարժարանի տնօրէնութիւնը կը յայտնէ, թէ 2022-2023 տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին բոլոր դասարաններուն համար, մասնապարտէզէն ժԲ. կարգեր, իրենց զոյգ մասնագիտութիւններով՝ Life Science եւ Socio-Economics, առաւել՝ BT վարչագիտութիւն (Administration), սեպտեմբեր ամսուան ընթացքին, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի եւ հինգշաբթի օրերը՝ առաւօտեան ժամը 9:00-12:00: Պուրճ Յամուտի եւ Ֆանարի շրջաններու աշակերտութեան համար փոխադրականօրերը անվճար են: Նորութիւն. տնօրէնութիւնը ուրախութեամբ կը յայտնէ նաեւ, թէ պատրաստ է ընդունելու 2 տարեկանէն սկսեալ փոքրիկներ մասնապարտէզի Ծիլ դասարան: Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել քարտուղարութեան կամ հեռաձայնել 01-241541 թիւին: Դեպի լուսատու ապագայի միակ հասցեն՝ Ազգային Միացեալ վարժարան: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

ԿՈՒԶՈՒԻ Առեւտրական հաստատութիւն մը կարիք ունի երիտասարդ տղամարդ պաշտօնեայի մը՝ 20-էն 25 տարեկան: Դիմել հեռ. 03-628077, կէսօրէ ետք ժամը 2:00-4:00:

ՄԵՐ ՇՈՒԿԱՆ ԱՅՆՃԱՐ Դեպի Ս. Պօղոս եկեղեցի մայր պողոտայ ՄԵՐ ՇՈՒԿԱՆ - VERNISSAGE Շաբաթ, 17 Սեպտեմբեր 2022-ին, կէսօրէ ետք ժամը 4:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 12:00 Կրպակներ ապահովելու, ինչպէս նաեւ մանրամասնութեան համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 03/703489 03/212384 03/968039 Facebook: ՄԻՐ ՇՈՒԿԱՆ

ՆՅՍՈՐ «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»-ԷՆ Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 ԵՎ 95 MHz 7.00 Զայլերգներ 7.03 Առաւօտ լուսոյ / Բարի լոյս 7.15 Հանդարտ երգեր 7.30 Բարեւ 8.30 Լուրեր 9.00 Բարեւ 10.00 Հանդարտ երգեր 10.30 Հայկական աշխարհի լուրեր 10.45 Խմբագրական խօսք 11.00 Լուր երգեր 12.00 Յորտապ օրակարգ. հիւր՝ Մուրատ Փափագեան (ուղիղ դիմատեսքով) 12.30 Խանդավառ երգեր 1.00 Ազգային-հայրենասիրական խոր երգեր 1.30 Լուրեր 2.00 Յիշատակելիները (Արցախէան Նորոտայ հերոսներ) 2.05 Յեղափոխական երգեր 3.00 Զըլ ետմ պիտմու. 4.00 Գրական անդաստան (վիպագիր Կարօ Փոլատեան) 4.30 Օտար երգեր 5.00 «Վանայ Ձայն»-ը երեկոյեան 5.05 Ունկերութեան վայելքը (Գարմեն Աճեմեանի հետ) 5.30 Վերամշակուած՝ ռեփերտ երգեր 6.30 Լուրեր 6.50 Չուգերգներ 7.00 ԼԵՄ-ի «Արծի» յայտագիր. հիւր՝ Շահան Գանտահարեան (ուղիղ դիմատեսքով) 8.00 Օրուան երգիչ (Մուրատ Մալխասեան) 8.30 Radio Jazz 9.30 Հայկական աշխարհի լուրեր (կրկ.) 9.45 Ետդատային երգեր 10.00 «Չարթօնք» (ընթերցումներ - 2) 11.00 Հանդարտ երգեր 12.00 Յիշատակելիները/ Յեղափոխական երգեր 2.00 Խանդավառ երգեր 3.00 Կրկնութիւններ 4.45 Հայերէն այլազան երգեր 6.00 Հանդարտ երաժշտութիւն